

ՖՐԱՆԿՈՖՈՆԻԱՅԻ ՎԵՅԱԺՈՂՈՎ

ԻՐԱԿԼԻ ԴԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՎՐԱՍՏԱՆԸ ԱՆՊԱՅՄԱՆՈՐԵՆ ԿՄԻԱՆԱ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԻՆ»

ՎՐԱՍՏԱՆԸ ԴԱՐՁԱՎ ՖՐԱՆԿՈՖՈՆԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՅԱԺՈՂՈՎԻ ԱՆՊԱՅՄ



Հունիսի 7-ին, Թբիլիսիում առաջին անգամ անցկացվեց Ֆրանկոֆոնիայի խորհրդարանական վեհաժողովի 48-րդ նստաշրջանը, որի աշխատանքին մասնակցեցին կազմակերպության 91 անդամ երկրների, ինչպես նաև ասոցացված եւ դիտորդական իրավունքով երկրների ներկայացուցիչները:

Համաժողովի աշխատանքին մասնակցեցին եւ ելույթ ունեցան Վրաստանի նախագահ Սալոմե Ջուրաբիշվիլին, վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին, խորհրդարանի նախագահ Շավլա Պապուաշվիլին:

Իր խոսքում, Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին նշեց, որ Վրաստանը կանգնած է աշխարհում (Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԱՌՈՂՋԱՊԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՒՌՈՒՑՔԱՅԻՆ ԱԽՏՈՐՈՇՄԱՄԲ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԲՈՒԺՈՒՄԸ ԿՖԻՆԱՆՍԱՎՈՐԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ



Հունիսի 10-ին, Վրաստանի կառավարության միտտի ավարտից հետո, Վրաստանի առողջապահության նախարար Ջուրաբ Ազարաշվիլին հայտարարեց, որ շուրջ մեկուկես ամսից պայմանագիր կկնքվի Թուրքիայի, Իսրայելի եւ Իսպանիայի առաջատար կլինիկաների հետ՝ ուռուցքային ախտորոշման երեխաների բուժման համար:

Նրա կենտրոն կլինի, ուռուցքային ախտորոշման յուրաքանչյուր երեխա, պետական ֆինանսավորմամբ, Վրաստանի հետ մեկտեղ հնարավորություն կունենա ախտորոշվել եւ բուժվել

Թուրքիայի, Իսրայելի եւ Իսպանիայի առաջատար կլինիկաներում: Ծրագրի տարեկան բյուջեն կազմում է մոտավորապես 30 մլն լարի:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

«ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԵՆԱԳՐՔԻ» ՆՈՐ ՏԱՐԲԵՐԱԿԸ ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԱՑԱԿ

ՆՈՐ ՕՐԻՆԱՆԱԽԱԳԾՈՎ ԿՐՈՆԱԿԱՆ ԲՈՒՈՐ ԴԱՎԱՆԱՆՔՆԵՐԻ ՀԵՏԵՎՈՐՆԵՐԸ ԱՆՅՆԵԼՈՒ ԵՆ ԱՅԼԵՆՏՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Հունիսի 12-ին, Վրաստանի խորհրդարանի արտահերթ նիստում, անցկացվեց «Պաշտպանության օրենսգրքի» նախագծի երկրորդ ընթերցմամբ քննարկումը: Փոփոխություններին կողմ քվեարկեց 79, դեմ՝ վեց պատգամավոր:

Ներկայացվելով օրինանախագծի նոր տարբերակը, Վրաստանի պաշտպանության փոխնախարար Գրիգոր Գիրգոաձեն նշեց, որ պաշտպանության նախարարության կողմից պատրաստված փոփոխությունները ներկայացվում են ամենակարեւոր բարեփոխումը, էական փոփոխում եւ զինվորական ծառայությունը լիովին հարմարեցնում պաշտպանության նպատակներին, ներդրում սոցիալական պաշտպանության կարեւորագույն երաշխիքները:

«Պաշտպանության օրենսգրքի» համաձայն՝ Վրաստանում գործող բոլոր դավանանքները կենթարկվեն այլընտրանքային աշխատանքային ծառայության, հայտարարեց փոխնախարարը եւ հավելեց, որ տարածված տեղեկությունը, թե օրենքի նախագիծը կրոնական հողի վրա խտրականություն է, ճիշտ չէ:

- Այսօր գործող օրենսդրությունը (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԸ ԿՐԿԻՆ ԿԱՎԵԼԱՅՎԵՆ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԸ ԱՅՂ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՅ՝ ԿՄՈՏԵՆԱ ՔԱՂԱՔԱԿԻՐԹ ԵՐԿՐՆԵՐԻՆ

ԱՌԱՋԻԿԱՅՈՒՄ ՇԵՇՏԸ ԿԴԻՎԻ ԿՈՒՏԱԿՈՒՄԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ՎՐԱ, ԹԵՊԵՏ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴՈՒՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ Է ՊԱՅՈՒՄ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՌՈՒՆԵՐԻ ՇԱՐՔԵՐԸ

Կառավարության խոստումների համաձայն, կենսաթոշակի ավելացման միտումը շարունակվում է, եւ Վրաստանը տարածաշրջանում կտրուկ բարելավեց իր դիրքերը: Բացառված չէ, որ կենսաթոշակներն ավելանան ծրագրվածից ավելի: Հիշեցնենք, որ ընդունված օրենքի համաձայն, կենսաթոշակը ամեն տարի ավելացվելու է առնվազն 20 լարիով, այսինքն՝ համախառն ներքին արտադրանքի աճին համապատասխան: Այդ տեսանկյունից, 2024 թվականին իրատեսակային փոփոխություն կարող է իրականացվել, քանի որ 2024-ը ընտրությունների տարի է, թեպետ կոնկրետ, թե ինչ գումարով կավելացվի կենսաթոշակը, այսօր հնարավոր չէ կանխագծել:

Դա կհստակեցվի ընթացիկ տարվա հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին, թեպետ ելնելով ներկայիս ցուցանիշներից, որոնք պայմանավորված են տարադրամային փոխանակումներով, դուրսորով արտահայտված կենսաթոշակի չափով, Վրաստանի դիրքերը տարածաշրջանում կտրուկ բարելավվեցին:

Վրաստանում բազային կենսաթոշակը կազմում է 127 դոլար: Ինչ վերաբերում է տարածաշրջանի

մյուս երկրներին, ապա, ինչպես նշեց վիճակագիր Սոսո Արջվաձեն, Վրաստանը միջին աշխատավարձի ցուցանիշով մի փոքր գերազանցում է Հայաստանին եւ մի փոքր զիջում՝ կենսաթոշակի գումարի հարցում (Հայաստանում միջին աշխատավարձը կազմում է 661,3 դոլար, միջին կենսաթոշակը՝ 128 դոլար): Ռուսաստանում կենսաթոշակը 236 դոլար է, իսկ աշխատավարձը՝ 1251 դոլար, Ադր-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ԻՐԱԿԼԻ ԴԱՐԻԲԱՇՎԻԼԻՆ ԵՎ ՆԻԿՈՒ ՓԱՇԻՆՅԱՆԸ ՄԻԱՄԻՆ ԴԻՏԵՅԻՆ ՖՈՒՏԲՈՒԻ ԵՎՐՈՊԱՅԻ 21 ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱՓՈՎԻՉ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Ինչպես արդեն հաղորդել ենք, հունիսի 7-8-ը Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը աշխատանքային այցով գտնվում էր Բաթումիում:



Այցի շրջանակներում՝ կայացավ Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլու եւ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի հանդիպումը: Երկու վարչապետների առանձնազրույցին հաջորդեց լայն կազմով պատվիրակությունների հանդիպումը:

Հունիսի 8-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին կնոջ, որդու եւ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ

Բաթումիում դիտեց ՈՒԵՖԱ-ի մինչեւ 21 տարեկանների Եվրոպայի առաջնության եզրափակիչ հանդիպումը Իսպանիայի եւ Անգլիայի հավաքականների միջեւ: Ֆուտբոլային հանդիպման ավարտից հետո, ուշ երեկոյան Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին Բաթումիի միջազգային օդանավակայանում ճանապարհեց Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի եւ նրան ուղեկցող անձանց:

ՈՒԺԻ ՄԵՉ ՄՏԱՎ ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ ՍԱՀՄԱՆԸ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՅՄԱՆ ՔԱՐՏՈՎ ՀԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ

ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՐՏՈՎ ՏԵՂԱՇԱՐԺՎԵԼԸ ՀԻՄՆԱԿԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ Է ԵՐԿՈՒ ԲԱՐԵԿԱՍ ԱԶԳԵՐԻ ՀԱՄԱՐ

Հունիսի 12-ին ուժի մեջ մտավ «Վրաստանի եւ Հայաստանի Հանրապետության միջեւ քաղաքացիների երկկողմանի առանց վիզայի տեղաշարժի մասին» համաձայնագիրը, որը Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին եւ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը ստորագրել են Երեւանում, 2023 թվականի հունվարի 12-ին:



Վրաստանի արտաքին գործերի նախարարության տարածած հաղորդագրության մեջ նշված է, որ համաձայնագիրը նպատակ ունի փոխադարձ երթուղիների համար է՛լ ավելի բարենպաստ պայմաններ մտցնել Վրաստանի եւ Հայաստանի քաղաքացիների համար:

«Համաձայնագրի համաձայն՝ Վրաստանի եւ Հայաստանի քաղաքացիներն իրավունք ունեն նույնականացման (ID) քարտով Վրաստանից Հայաստան եւ հակառակը՝ մեկնել միջազգային ճանապարհորդության համար թույլատրված սահմանային անցակետով», - ասված է Վրաստանի ԱԳ նախարարության հաղորդագրության մեջ:

Երկու երկրների վարչապետերի ստորագրած համաձայնագիրը փոխարինում է 1993 թվականի մայիսի 19-ին ստորագրված «Վրաստանի Հանրապետության եւ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների իրենց տարածքներում առանց վիզայի ռեժիմի տեղաշարժի մասին» համաձայնագիրը:

Վրաստանի խորհրդարանի նախագահ Շավլա Պապուաշվիլին, արձագանքելով նույնականացման քարտով Վրաստանի եւ Հայաստանի սահմանը հատելու որոշմանը, Twitter-ում նշեց, որ Վրաստանի եւ Հայաստանի միջեւ նույնականացման քարտի միջոցով տեղաշարժվելը հիանալի հնարավորություն է երկու բարեկամ ժողովուրդների համար առանց որեւէ խնդրի ճանապարհորդելու, նոր համակարգը կփոխարինի անձնագրային ճանապարհորդության համակարգին, որը քաղաքացիներին ավելի մեծ ազատություն կտա:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԿԱՆԱԾ ՑՈՐԵՆԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄԸ ԿԱՐՅԱՆԱՓՈՎԿԻ


Հունիսի 13-ին, Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլու գլխավորությամբ, անցկացվեց տնտեսական խորհրդի նիստ, որտեղ քննարկվեցին ընթացիկ տնտեսական ծրագրերն ու ապագա անելիքները, անդրադարձ կատարվեց ցորենի ներկրման խնդրին:



Մախագոթերի իրականացման ընթացքը: Հանդիպմանը խոսվեց նաև 2023 թվականի բերքահավաքի նախապատրաստական աշխատանքների և բերքի սահուն տեղավորման խնդիրների մասին:

Նշվեց, որ առատ տեղումների արդյունքում Կախեթի շրջանում ցորենի բերքի զգալի մասը չի կարող բավարարել պարենային ցորենի պահանջները, ինչի պատճառով էլ ֆերմերները ստիպված են ցորենը վաճառել կերային նպատակներով: Նշված գործընթացը դյուրացնելու և սահուն իրականացնելու նպատակով որոշում է կայացվել՝ մինչև 2023 թվականի նոյեմբերի 1-ը սահմանափակել աղացած ցորենի ներկրումը:

աճող տնտեսական ցուցանիշները, նշվեց, որ կառավարությունն այս տարվա սկզբին արդյունավետ քայլեր է ձեռնարկել, և արդյունքում երկրում գրանցվել է 0,6 տոկոս գնաճ, և ակնկալիք կա, որ այս տարի գնաճը կլինի նախատեսվածից ցածր: Նիստին անդրադարձան Վրաստանում թվային տնտեսության զարգացմանը, խոսվեց նաև մարզերում ենթակառուցային ծրագրերի մասին, քննարկվեց ընթացիկ ու նոր



ՆԱՏՕ ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎԸ ՀԱՍՏԱՏԵՑ ՈՒԿՐԱԻՆԱՅԻՆ ՈԱԶՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ

Վիլնյուսում անցկացված ՆԱՏՕ-ի գագաթաժողովում, այլապես երկրները հաստատեցին Ուկրաինային ռազմական օգնության բազմաձև ծրագիրը և Ուկրաինա-ՆԱՏՕ խորհրդի ստեղծումը:

ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Յենս Սթոլթենբերգի հայտարարությամբ՝ դաշնակիցները համաձայնեցրել են Ուկրաինային ՆԱՏՕ-ին մոտեցնելու փաթեթը, ըստ որի՝ նախատեսվում է օգնության բազմաձև ծրագիր, Ուկրաինա-ՆԱՏՕ նոր խորհրդի ստեղծում, խորհրդակցությունների և որոշում կայացնելու ֆորում:

ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՄԵԿՆԱՐԿԵՑ ՀՈՂԵՐԻ ԱՆՎՃԱՐ ԳՐԱՆՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ



Թբիլիսիի քաղաքապետարանը միացել է Վրաստանի արդարադատության նախարարության հողերի պարբերական գրանցման ծրագրին, որը քաղաքացիների համար իրականացվում է անվճար:

Ինչպես հայտարարեց Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն, Թբիլիսիի քաղաքապետարանի և արդարադատության նախարարության միջև ստորագրվել է փոխհամագործակցության հուշագիր, որը նախատեսում է Թբիլիսիի առանձին շրջաններում հողի պարբերական գրանցման իրականացում: Խոսքը վերաբերում է ավելի քան 27 հազար հողատարածքների: Վերոնշյալ ծրագիրը կավարտվի 2024 թվականի դեկտեմբերի 31-ին: Հուշագիրը ստորագրեցին Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն և Վրաստանի արդարադատության նախարար Ռատի Բրեգաձեն: Ինչպես նշեց Թբիլիսիի քաղաքապետը, ծրագիրը կիրականացվի աստիճանաբար: Ներկա փուլում հողերի գրանցում կանց-

կացվի Դիզորիում, Չվելի Վարձիսիում, Դիդոմիում, Քվեսեթիում, Վիֆանում, Ծղնեթիում, Ախալդաբայում, Կիկեթի-Սազորիսիում, Կոջորիում, Ծավկիսիում, Շինդիսիում և Տաբախմեթայում: Ինչպես նշեց Կախա Կալաձեն, Թբիլիսիի տարածքում առկա են չգրանցված տարածքներ, և դրանք գրանցման նախագիծը կիրականացվի հանրային ռեեստրի կողմից, իսկ ֆինանսական աջակցությունը կտրամադրի Թբիլիսիի քաղաքապետարանը: Քաղաքապետի հավաստմամբ՝ կմույնականացվեն մուկիցիպալիտետի սեփականության հաշվարկում գտնվող հողատարածքները: Հիշեցնենք, որ 2016 թվականի օգոստոսի 1-ին մեկնարկած հողերի անվճար գրանցման ծրագրով, 2022 թվականի վերջին արդեն գրանցվել էր շուրջ 1 միլիոն հեկտար հողատարածք: Ինչ վերաբերում է գյուղատնտեսական հողերի գրանցմանը, ապա դա պետական վարկերի ստացման ամենագլխավոր պայմանն է:

ՎՐԱՍՏԱՆ - ԳԵՐՄԱՆԻԱ

ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ՎՐԱՑ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԱՌԿԱ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Հունիսի 11-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին հանդիպում ունեցավ պաշտոնական այցով Վրաստանում գտնվող Գերմանիայի Բունդեսբազի նախագահ Բերթել Բաի հետ:

Հանդիպմանը քննարկվեցին Վրաստանի և Գերմանիայի միջև առկա հարաբերությունները և համագործակցության ապագա հեռանկարները, ընդգծվեցին Եվրամիությանն անդամակցելու ճանապարհին Վրաստանի ձեռք բերած

առաջընթացը, այդ թվում՝ Եվրոպական խորհրդի հանձնարարականների շրջանակներում իրականացվող բարեփոխումները: Նշվեց, որ Վրաստանը բարձր է գնահատում Գերմանիայի ուժեղ աջակցությունը ԵՄ-ին Վրաստանի անդամակցու-

թյանը: Ընդգծվեցին Վրաստանի կողմից իրականացվող ջանքերը Եվրահանձնաժողովի 12 կետից բաղկացած հանձնարարականների կատարման ուղղությամբ: Կառավարության ղեկավարը շնորհակալություն է հայտնել Գերմանիայի Բունդեսբազի նախագահին՝ Վրաստանի ինքնիշխանությանն ու տարածքային ամբողջականությանը, ինչպես նաև չճանաչման քաղաքականությանը աջակցելու համար:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

«ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍՈՐՔԻ» ՆՈՐ ՏԱՐԲԵՐԱԿԸ ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԱՅԱԿ

(Սկիզբը՝ 1-ին էջում) թյան համաձայն՝ մենք փաստ ունենք, որ բոլոր դավաճանքները ներկայացնող քահանաները ենթակա են տարկետման, այդ թվում՝ ուղղափառ

հոգեւոր սպասավորները: Նաեւ՝ առաջարկվող փոփոխությանը բոլոր քահանաները, այդ թվում՝ ուղղափառ հոգեւոր սպասավորները կենթարկվեն այլընտրանքային աշխատանքային ծառայության, - նշեց

Գրիգոր Գիրոգաձեն: Նրա պարզաբանմամբ՝ Վրաստանի Սահմանադրությունը ճանաչում է Կոնկորդատը, և «Պաշտպանական օրենսգրքի» համաձայն՝ ուղղափառ քահանան, ինչպես և մյուս դավանանքները, ենթակա են լինելու այլընտրանքային աշխատանքային ծառայության: Նշենք, որ խորհրդարանը փոփոխությունները երրորդ ընթերցմամբ կհաստատի սեպտեմբերին:

ՖՐԱՆՍԻԱ ԱՆԿԱՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՇԱՐՈՒՄԱԿՎՈՒՄ ԵՆ, ՀԱՄՅՐԱԾ ՎԱՍԸ ԳԵՐԱԶԱՆՑԵԼ Է 650 ՄԻԼԻՈՆ ԵՎՐՈՆ

Ինչպես արդեն հաղորդել ենք, Ֆրանսիայում բողոքի ալիք էր բարձրացրել հունիսի 27-ին ստիկանության կողմից 17-ամյա դեռահաս վարորդի սպանությունը:

Անկարգությունների մասնակիցները հունիսի 27-ից ի վեր հրկիզել ու կողոպտել են 1000-ից ավելի խանութ և 200 առևտրի կենտրոն ամբողջ երկրում: Ապահովագրական ընկերություններն ստացել են 650 միլիոն եվրո ընդհանուր գումարի վնասի փոխհատուցման դիմումներ Ֆրանսիայում տեղի ունեցած անկարգություններից հետո:

Ավելի վաղ Ֆրանսիայի ձեռնարկատերերի շարժումը (MEDEF) ավերումներից կորուստները գնահատել էր ավելի քան 1 միլիարդ եվրո:

ՈՒԿՐԱԻՆԱ-ՈՒՄԱՍՏԱՆ. ՊԱՏԵՐԱԶՄԻ 500-ՐԴ ՕՐԸ

ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶՈՐ Է ՊԱՐԶԵԼ ՇՈՒՐՋ 500 ԵՐԵՆԱԿ

Ուկրաինայի գլխավոր դատախազության տվյալներով, ռուս-ուկրաինական պատերազմի 500 օրվա ընթացքում զոհվել է 494 երեխա:

«Անչափահասների հարցերով դատախազների պաշտոնական տեղեկատվության համաձայն՝ 2023 թվականի հուլիսի 8-ի առավոտյան մահացել է 494 երեխա, ավելի քան 1051-ը տարբեր վնասվածքներ են ստացել», - նշված է հաղորդագրության մեջ:

Ուկրաինայի գլխավոր դատախազությունից նշում են, որ այդ տվյալները վերջնական չեն:

«ԱՁՈՎՍՏԱԼԻ» ՊԱՇՏՊԱՆՆԵՐԸ ԹՈՒՐԹԻՎՅԻՑ ՎԵՐԱՊԱՌՆՈՒՄ ԵՆ ՈՒԿՐԱԻՆԱ

Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկոյի հայտարարությամբ, Ռուսական գերությունից ազատվելուց հետո «Ազովստալի» պաշտպանները վերադառնում են Ուկրաինա:

- Թուրքիայից տուն ենք վերադառնում ու մեր հերոս-

ներին մեզ հետ ենք տանում: Ուկրաինացի զինվորներ Դենիս Պրոկոպենկոն, Սվյատոսլավ Պալամարը, Սերգեյ Վոլինսկին, Օլեգ Խոմենկոն, Դենիս Շլեգան վերջապես կլինեն իրենց ընտանիքների հետ, - հայտարարեց Վլադիմիր Զելենսկին:

Հիշեցնում են, որ «Ազովստալի» պաշտպանները գերությունից ազատվել էին 2022 թվականի սեպտեմբերին և գտնվում էին Թուրքիայում: Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդոգանը գլխավորել է ռուսական կողմի հետ բանակցությունները՝ կապված գերիների փոխանակման հետ:

«Ազովստալի» պաշտպանների՝ Ուկրաինա վերադառնալու հարցով Ռուսաստանի նախագահի մամուլի խոսնակ Դմիտրի Պեսկովը մեղադրել է Ուկրաինային և Թուրքիային պայմանավորվածությունները խախտելու մեջ:

ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԿԶԲԻՑ Ի ՎԵՐ ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՂԱՂՐԱՆՔՈՎ ՀԱՐՈՒՑՎԵԼ Է 1300 ԳՈՐԾ

Ուկրաինայի Հետաքննությունների պետական բյու-

րոյի տվյալներով՝ ռուսական ներխուժումից ի վեր Ուկրաինայում դավաճանության ավելի քան 1300 գործ է հարուցվել:

Պաշտոնական տեղեկատվության համաձայն՝ 2022 թվականի փետրվարից մինչ այժմ հարուցվել է 1677 գործ կապված Ուկրաինայի ազգային շահերի դեմ հանցավոր գործունեության հետ, այդ թվում՝ 1315-ը՝ պետական դավաճանության հետ կապված:

Մամուլի հաղորդագրության մեջ նշվում է, որ նույն ժամանակահատվածում Ուկրաինայում հարուցվել է 286 քրեական գործ՝ կոլաբորացիոն գործունեության և 23 դեպք՝ ազդեցության օգնելու փաստի առիթով: Ներկայումս Ուկրաինայում ստուգվում է 1052 մարդ, ովքեր կասկածվում են դավաճանության կամ համագործակցության մեջ:

2022 թվականի մարտին Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկին ստորագրել է Ուկրաինայի Քրեական օրենսգրքում փոփոխություններ, ըստ որոնց՝ պատերազմի ժամանակ պետական դավաճանության մեջ մեղադրվողներին սպառնում է ցմահ ազատազրկում և գույքի բռնագրավում:

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՎՐԱՍՏԱՆ - ՆԱՏՕ

ԻԼԻԱ ԴԱՐՉԻԱՇՎԻԼԻ. «ՎԻՆՅՈՒՄԻ ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎՈՒՄ ԵՎ ՄԵԿ ԱՆԳԱՍ ՀԱՍՏԱՏՎԵՅ ԱՆՅԱՆՍԻ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՅՈՐ ԱԶԱԿՈՒԹՅՈՒՆԸ»



Վիլնյուսում ՆԱՏՕ-ի անդամ երկրների դեկավարների գագաթաժողովին հրավիրված Վրաստանի արտաքին գործերի նախարար Իլիա Դարչիաշվիլին, մեկնաբանելով գագաթաժողովի ընունած բանաձևի՝ Վրաստանին առնչվող հոդվածները, նշեց, որ Վիլնյուսի գագաթաժողովում եւս մեկ անգամ հաստատվեց, որ Վրաստանը հզոր աջակցություն է ստանում ՆԱՏՕ-ի գործընկերներից:

- Շատ ուժեղ աջակցություն է արտահայտվում մեր տարածքային ամբողջականության եւ ինքնիշխանության նկատմամբ, բարձր են գնահատվում Վրաստանի ջանքերը՝ զլրբալ անվտանգության ամրապնդման գործում իր նշանակալի ներդրումն ունենալու համար: Այն համապատասխանաբար գնահատվում է մեր գործընկերների կողմից: Կարծում եմ սա նույնպես շատ կարեւոր ուղերձ է: Վրաստանը, ինչպես նախկինում, ավանդաբար ՆԱՏՕ-ի հետ ունի շատ դինամիկ, երկկողմանի համագործակցության օրակարգ: Այս գործընթացը կշարունակվի նաեւ ապագայում: Մենք ունենք համապատասխան մեխանիզմներ՝ ապահովելու, որ Վրաստանի ինտեգրումը ՆԱՏՕ-ին մի գործընթաց է, որն իր արժեքավոր արդյունքներն է բերում համաշխարհային անվտանգության ամրապնդման գործում,- հայտարարեց Իլիա Դարչիաշվիլին:

ԹԲԻԼԻՍԻՆ ԼԻՈՎԻՆ ՊԱՏՐԱՍ Ե ՆԱՏՕ-ԻՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆԸ



Վրաստանի խորհրդարանի նախագահ Շալվա Պապուաշվիլին հայտարարել է, որ Վրաստանը լիովին պատրաստ է անդամակցել ՆԱՏՕ-ին, սակայն «հարվածում է ապակե դռանը»:

Ըստ նրա՝ Վրաստանի եւ ՆԱՏՕ-ի միջեւ քաղաքական եւ ռազմական համագործակցությունը զգալիորեն աճել է, եւ Վրաստանը զգալի օգնություն է ստացել Դաշինքից: - Բայց Վրաստանի անդամակցության կրիտիկական հարցում ՆԱՏՕ-ի ինտերկեցվածքի մեջ որակապես քիչ բան է փոխվել... Անցած տասնամյակի ընթացքում Վրաստանը հիմնովին փոխել է իր ժողովրդավարական ինստիտուտները, հրաժարվել կառավարման ավտորիտար համակարգից եւ կատարելագործել է իր պաշտպանունակությունը ՆԱՏՕ-ի չափանիշներին համապատասխան: Իսկ ՆԱՏՕ-ն գագաթաժողովից գագաթաժողով միայն կրկնում է անդամակցության իր խոստումը,- ասել է Պապուաշվիլին:

Վիլնյուսում Դաշինքի գագաթաժողովից առաջ բաց ցամաքում Պապուաշվիլին հիշեցրել է նաեւ 2002 թվականին Երուարդ Շեւարճանաձեի խոսքը՝ ՆԱՏՕ-ի բաց դռների քաղաքականության վերաբերյալ: Խորհրդարանի նախագահը գրել է նաեւ, որ Վրաստանի անդամակցությունը ՆԱՏՕ-ին պետք է գերակա լինի կուսակցական քաղաքականությունից:

ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄ

«ԹԲԻԼԻՍԻ ՓՐԱՅԴ»-Ի՝ «ՉՊԱՐՏՈՒԹՅԱՆ ՓԱՌԱՏՈՆԸ» ՏԱՊԱԿԵՑ

Հունիսի 8-ին Tbilisi Pride-ի հպարտության շաբաթն ամփոփող Tbilisi Pride Fest 2023-ը տապալվեց: «Լիսի Վոնդերլենդ»-ի հարող տարածքը, որտեղ հայտարարվել էր «Չպարտության փառատունը», զբաղեցրել էին ակցիայի մասնակիցները, ովքեր բողոքում էին միջոցառման անցկացման դեմ:

Լրատվամիջոցների տեղեկատվությամբ՝ մեծ թվով իրավապահներ մոբիլիզացված էին գլխավոր մուտքի մոտ, նրանք հանրահավաքի մասնակիցներին թույլ չէին տալիս մտնել ներքին տարածք՝ անմիջապես այնտեղ, որտեղ անց էր կացվելու «Թբիլիսիի Չպարտություն» փառատունը, թեպետ հանրահավաքի մասնակիցները ճեղքեցին ոստիկանական շղթան: Մոտ մեկ ժամ ոստիկաններին հաջողվեց զսպել ցույցի մասնակիցներին, ովքեր փորձեցին մտնել ներքին տարածք: Բախումների առանձին դեպքեր գրանցվեցին: Իրավապահները մի քանի հոգու դուրս բերեցին տարածքից: Հունիսի 8-ին Tbilisi Pride-ի հպարտության շաբաթն ամփոփող Tbilisi Pride Fest 2023-ը տապալվելու գործով Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 166-րդ եւ 173-րդ հոդվածներով երկու անձ է ձերբակալվել: Ներքին գործերի նախարարությունից փոխանցել են, որ քրեական գործ է հարուցվել մանր խուլիգանության եւ ոստիկանի նկատմամբ անհնազանդության մեղադրանքով: Տեղի ունեցածի կապակցությամբ՝ «Թբիլիսի Փրայդ»-ը տարածել է հայտարարություն: «Մենք ստիպված էինք լքել տարածքը: Իրավապահները չեն կարողացել պաշտպանել տարածքը: Տարիանումն իրականացվել է միկրոավտոբուսներով,- ասված է հարողագրության մեջ:

Մենք ստիպված էինք լքել տարածքը: Իրավապահները չեն կարողացել պաշտպանել տարածքը: Տարիանումն իրականացվել է միկրոավտոբուսներով,- ասված է հարողագրության մեջ:



ՀՈՒՆԻՍԻ 13-ԻՆ ՆՇՎԵՑ ՍՎԵՏԻՑԻՆՈՎՈՐԱՄՆԻ ՏՈՆԸ

Հունիսի 13-ին Վրաստանի Սուրբ Ուղղափառ եկեղեցին տոնեց Սվետիցխտվոլոբան (Մցխեթոբա): Սվետիցխտվոլոբայի տոնը կարելի էր արժեքավորել Վրաստանում, նշվում է տարեկան երկու անգամ՝ հոկտեմբերի 14-ին եւ հունիսի 13-ին: Այս տոնը նշվում է Մցխեթա քաղաքում, որտեղ գտնվում է Սվետիցխտվելի եկեղեցին՝ Վրաց Ուղղափառ եկեղեցու կենտրոնը, Սայր տաճարը, որը նաեւ Համայն Վրաց Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդի նստավայրն է:

ԳՈՐԾՈՒՄ Ե ԼԱՍՏԱՆԱՎԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հունիսի 27-ին, ռումինական Կոնստանցիայից Փոթի առաջին ուղերձը կատարեց E60 Shipping Line ընկերության լաստանավը: Ինչպես տեղեկացրին ընկերությունից, լաստանավը Փոթիից Կոնստանցիա ուղևորվեց հունիսի 30-ին: Վրաստանից Ռումինիա երթուղին տեւում է 42 ժամ, լաստանավում հարմարավետ պայմաններ են ստեղծված ուղևորների համար, գործում է ռեստորան, բար, ժամանցային գոտիներ: «Վիլնյուս» 190 մետրանոց լաստանավը վարձակալվել է վրացական E60 Shipping Line ընկերության կողմից: Փոթի-Կոնստանցիա լաստանավային երթուղին Կովկասի երկրներն ու Կենտրոնական Ասիան եվրոպայի հետ կապող ամենակարճ ուղին է եւ նշանակալի է ինչպես Վրաստանի, այնպես էլ՝ հարևան երկրների համար: Լաստանավային հաղորդակցության հստակ աշխատանքը նշանակալի ազդակ կհաղորդի տրանսկասպիական միջին միջանցքի գործունեությանը:

ՏԱՐԱԴՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿԱՄԱՆ ԿՈՒՐՍ (14 հունիսի)

Table with 2 columns: Category and Value. 1 ԱՄՆ ԴՈՒՄՐ 2.5803, 1 ԵՎՐՈ 2.8806, 100 ՌՈՒՐԼԻ 2.8639, 1000 ԴՐԱՄ 6.6738

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

ԱՆԱԼՔԱՆՔԻ. ՄԱՐԶԱՎԱՆ ԵՎ ՄԱՆԿԱԿԱՆ ԺԱՄԱՆՑԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ ՎԵՐԱՆՈՐՈՎԳՎՈՒՄ ԵՆ

Առողջ ապրելակերպը քարոզելու նպատակով՝ Ախալքալաքի քաղաքապետարանի վարչական միավորներում շարունակվում է մարզական եւ մանկական ժամանցի տարածքների կազմակերպումը: Մասնավորապես, Ախալքալաքում՝ Աղմաշենեբելի փողոցում, ավարտվում է Մոր միմի հրապարակի կառուցումը: Նախագծի արժեքը կազմում է 170 999 լարի: Ախալքալաքի մունիցիպալիտետի քաղաքապետ Սելբրոն Մակարյանը եւ փոխքաղաքապետ Թեյմուրազ Աճեղիձեն հանդիպեցին տեղի երիտասարդների հետ, ծանոթացան նրանց ցանկություններին ու կարիքներին: Երիտասարդները շնորհակալություն հայտնեցին ինքնակառավարման առաջին դեմքերի նշված նախաձեռնության եւ իրենց խոստումները կատարելու համար եւ մաղթել հաջողություններ:

ԱՆՑԿԱՑՎԵՑ «ԶՎԱԽՔԻ ԳՈՐՈՒՆ-2023» ՄՐՑՈՒՅԹ-ՓԱՌԱՏՈՆԸ

Հունիսի 8-ին Ախալքալաքի մունիցիպալիտետի մշակույթի տանը, քաղաքապետարանի կազմակերպմամբ եւ աջակցությամբ, անցկացվեց «Զավախքի գարուն-2023» մրցույթ-փառատունը: Մրցույթին մասնակցեցին մունիցիպալիտետի ծավալով գրանցված 23 համույթներն ու վեց մենակատարները: Հատուկ այս մրցույթ-փառատունի համար ձեւավորված ժյուրին բացահայտեց հաղթող համույթները եւ պատվավոր կոչման հետ միասին համույթի անդամների հանձնվեցին մրցանակներ, պատվոգրեր ու նվերներ:



Փառատունի գլխավոր մրցանակը բաժին ընկավ Կուժբուրդո գյուղի պարի համույթին: Ինչ վերաբերում է մրցանակային առաջին երեք տեղերին, ապա դրանք զբաղեցրեցին «Մուրջի» համույթը, Ախալքալաքի երիտասարդ կենտրոնի համույթը եւ Կարտիկան գյուղի համույթը: Փառատուն-մրցույթին ներկա էին տեղական ինքնակառավարման ներկայացուցիչներ եւ վարչական տարբեր միավորումներից հրավիրված հյուրեր: Նշենք, որ «Զավախքի գարուն-2023» մրցույթ-փառատունն արդեն ավանդական բնույթ է կրում եւ արդեն անցկացվեց 13-րդ անգամ:

ԱՆԱԼՑԻՆԵ. ՎԱՐԺԱՆՔ ՍԱՀՄԱՆԱՓՈԿ ԴՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ախալցխիտեի մունիցիպալիտետի Ուրեկի ավանում անցկացվեց սահմանափակ հնարավորություններ ունեցող անձանց հարցերով աշխատող փորձագետների մասնագիտական ունակությունների հզորացման վարժանք:

Միջոցառմանը ներկա էին Ախալցխիտեի մունիցիպալիտետի փոխքաղաքապետ Ռուբեն Կարապետյանը, հասարակական առողջապահության եւ սոցիալական ծառայության ներկայացուցիչներ ու մունիցիպալիտետի սակրեբուլոյի պատգամավորներ:

Ա ն ց - կ ա ց վ ա ժ վ ար ժ ա ն ք ի ը ն թ ա ց ք ու մ մ ա ն ր ա մ ա ս ն ը ն մ ար կ վ ե ց ի ն «Զբաղվածության տեղական քաղաքականության զարգացման, սահմանափակ հնարավորություններ ունեցող անձանց իրավունքների բարելավման» աջակցության «Սահմանափակ հնարավորություններ ունեցող անձանց իրավունքների մասին օրենքի իրականացման փաստաբանության», նախագծի շրջանակներում իրականացվող միջոցառումները:

Նշենք, որ այդ նախագծի շրջանակներում վերոնշյալ անձանց աշխատանքով ապահովելու նպատակով, մունիցիպալիտետում անցկացվեց իրավիճակի թիրախային վերլուծություն եւ փորձագետների օգնությամբ մշակվեց սահմանափակ հնարավորություններ ունեցող անձանց զբաղվածության, մունիցիպալիտետի գործունեության ծրագիր:

«ՄԱՆԵՍՏՐՈ - ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐ» - ՆԻՆՈՇՄԻՆՂԱ

ԱՆԻ ՄՈՍՈՅԱՆ. «ՆԻՆՈՇՄԻՆՂԱՅՈՒՄ «ՆՈՐԱՑՎԱԾ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐ» ԾՐԱԳՐՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՆԱԽԱԳԾԵՐԸ ԹԵՎԱԿՈՒՏԵԼ ԵՆ ԵԶՐԱՓՈՎԿԻՉ ՓՈՒԼ»

Նինոծմինդայի մունիցիպալիտետում ավարտին են մոտենում «Նորացված տարածաշրջաններ» պետական ծրագրով նախատեսված ենթակառուցային նախագծերը: Գրեթե ավարտվել են ժամանցի, հանգստյան վայրերի վերակառուցման աշխատանքները, զուգահեռաբար տարվում են ճանապարհների կարգավորման աշխատանքները: Մունիցիպալիտետի գյուղերում իրականացվելիք ճանապարհաշինական աշխատանքների հետ մեկտեղ, Նինոծմինդա քաղաքում վերանորոգման միաժամանակյա աշխատանքներ են տարվում 11 փողոցների վերակառուցման ուղղությամբ:

Նինոծմինդայի մունիցիպալիտետում իրականացվող և իրականացվելիք ենթակառուցային նախագծերի մանրամասների վերաբերյալ, հեղինակավոր, բարձր վարկանիշային «Մանեստր» հեռուստաընկերության «Մանեստր-տարածաշրջաններ» հաղորդաշարի հեղինակ Իրակլի Մախսուրաձեն հարցազրույց ունեցավ Նինոծմինդայի մունիցիպալիտետի քաղաքապետ Անի Մոսոյանի հետ: Ստորև ներկայացնում ենք այդ հարցազրույցը:

Ի.Մախսուրաձե.- Տիկին Անի, ձեր մունիցիպալիտետում ավարտին է մոտենում «Նորացված տարածաշրջաններ» ծրագրով իրականացվող ենթակառուցային նախագծերի իրականացումը: Վերջին հաշվով, ի՞նչ կստանան մունիցիպալիտետի այդ ծրագրի իրականացումից, որքանո՞վ կկերպարանափոխվի թեկուզ, ասենք, Նինոծմինդան:

Ա.Մոսոյան.- Ինչպես արդեն նշեցիք, Վրաստանի վարչապետի նախաձեռնած «Նորացված տարածաշրջաններ» կառավարական ծրագիրը Նինոծմինդայում թեալովսել է եզրափակիչ փուլ: Մինչ այդ, Նինոծմինդայում հանգստյան գոտիները, փաստորեն, բացակայում էին, ներկայումս քաղաքում կազմավորվել է երկու զբոսայգի, որտեղ երիտասարդները կարող են անցկացնել իրենց ժամանակը: Զբոսայգիներում ձեւավորվել են նաեւ մանկական խաղատարածքներ համապատասխան սարքավորումներով, արահետներով, կանաչ ծածկույթով: Հիշեցնեն, որ բարձրալեռ Նինոծմինդայում կլիմայական խիստ պայմաններ են, փաստորեն, փոքրիշատե տաք օրեր են լինում միայն հուլիս, օգոստոս, սեպտեմբեր ամիսներից

և դրանից լիարժեք օգտվում են մեր նինոծմինդացիները: Զբոսայգիները լի են մարդկանցով, ովքեր զբոսնում, հանգստանում են և մարդիկ շատ գոհ են: Այդ զբոսայգիները, իրոք, վերափոխեցին Նինոծմինդայի պատկերը, դրանք շատ անհրաժեշտ էին մեր քաղաքին: Ներկայումս ծրագրում ենք հանգստյան և ժամանցի երրորդ գոտու կարգավորումը:

Ի.Մախսուրաձե.- Դուք խոսեցիք զբոսայգիների մասին, որքանո՞վ տեղեկացված ենք, կարգավորվելու են «Հայոս-Քարթլուս» և կենտրոնական զբոսայգիների տարածքները: Կարգավորման աշխատանքները պետք է արդեն ավարտված լինեին: Հետաքրքիր է, ներկայումս ո՞ր փուլում են գտնվում դրանք:

Ա.Մոսոյան.- Իրոք, «Նորացված տարածաշրջաններ» ծրագրով նախատեսված էին Նինոծմինդայի «Հայոս-Քարթլուս» և կենտրոնական զբոսայգիների վերակարգավորումը, թեպետ մենք մեր մունիցիպալային բյուջեից միջոցներ հայթայթեցիք այս զբոսայգիներում լրացուցիչ 580 մետր երկայնքով տարածքի սալապատման, աս-

Ֆալտապատման, մայթերի կարգի բերման և մյուս աշխատանքների համար: Արդեն ավարտվել է ծրագրված աշխատանքների գրեթե 47 տոկոսը:

Ի.Մախսուրաձե.- Զբոսայգիների կարգավորմանը զուգահեռ, միայն Նինոծմինդայում միաժամանակ իրականացվում է 11 փողոցների վերանորոգումը: Եթե հնարավոր է, մի փոքր մանրամասնեք թեման, ե՞րբ եք մտադիր ավարտել այդ նախագծերը:

Ա.Մոսոյան.- Մեր մունիցիպալիտետում մենք առանձնակի նշանակություն ենք հատկացնում ճանապարհային ենթակառուցվածքների կարգավորմանը: Հենց դրանից ելնելով, այս տարի ավարտին կհասնենք Նինոծմինդայի 11 փողոցների վերանորոգման աշխատանքները, միաժամանակ վերանորոգվում են բազմահարկ շենքերի բակերը: Այդ ամենը ներառված է ծրագրում: Քաղաքում փողոցների կարգավորումն ավարտելուց հետո՝ ձեռնամուխ կլինենք ներգյուղական ճանապարհների կարգավորմանը:

ՖՐԱՆԿՈՖՈՆԻԱՅԻ ՎԵՋԱԺՈՂՈՎ

ԻՐԱՎԼԻ ԴԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՎՐԱՍՏԱՆԵ ԱՆՊԱՅՄԱՆՈՐԵՆ ԿՄԻԱՆԱ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԻՆ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

հաքաղաքական մի շարք մարտահրավերների առաջ: Նրա պարզաբանմանը, սակայն, երկրի իշխանություններն ամեն ինչ անում են խոհեն քայլերով հաղթահարելու դժվարին փուլը՝ պահպանելով խաղաղությունը Վրաստանում:

Վարչապետը հույս հայտնեց նաեւ, որ Վրաստանը կստանա ԵՄ անդամակցության թեկնածու երկրի կարգավիճակ:

- Անկախության վերականգնման առաջին իսկ տարվանից Վրաս-

տանի նպատակը եվրաինտեգրումն է, մենք մեծ ուժով ու եռանդով ենք գնում այս ճանապարհով, - ասաց Իրակլի Դարիբաշվիլին՝ հավելելով, որ այս փուլում թերիլիսին սպասում է եվրահանձնաժողովի որոշմանը Վրաստանին Եվրամիությանն անդամակցելու թեկնածուի կարգավիճակ տրամադրելու վերաբերյալ:

Նշենք, որ Վրաստանը 2004 թվականից անմիջականորեն ներգրավված է Վեհաժողովի գործունեության մեջ՝ որպես դիտորդ: 2021 թվականին Վրաստանի խորհրդարանը պաշ-

տոնական նամակ է ուղարկել Ֆրանկոֆոնիայի խորհրդարանական վեհաժողովին ասոցացված անդամակցության վերաբերյալ: Ֆրանկոֆոնիայի խորհրդարանական վեհաժողովը Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության խորհրդատվական, խորհրդարանական մարմին է: Ներկայումս այն ունի 91 անդամ, 56-ը՝ լրիվ իրավունքներով, 17-ը՝ ասոցացված, 18-ը՝ դիտորդի կարգավիճակով:

ՄՈՑԻԱԼԱԿԱՆ

ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԸ ԿՐԿԻՆ ԿԱՎԵԼԱՅՎԵՆ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԵ ԱՅՊ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՅ՝ ԿՄՈՏԵՆԱ ԲԱՂԱՔԱԿԻՐԹ ԵՐԿՐՆԵՐԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

բեջանում կենսաթոշակը 213,5 դոլար է, թուրքիայում՝ 300 դոլար, թեպետ այդ երկրում միջին աշխատավարձը կազմում է 1160 դոլար, արժեզրկումն այնքան բարձր է, որ այդ գումարը բավարար համարել չի կարելի:

Չնայած կենսաթոշակի գումարի ավելացման դինամիկային, վիճակագիրը գտնում է, որ Վրաստանի կառավարության համար գլխավոր մարտահրավերը շարունակվում է մնալ կենսաթոշակի գումարի համապատասխանեցումը միջին աշխատավարձին, ինչն առաջօր չկարգավորված է հիմնախնդիր է: Ըստ վիճակագրի՝ նորմալ երկրում կենսաթոշակը պետք է կազմի միջին աշխատավարձի առնվազն 35 տոկոսը, իսկ մեզ մոտ այն չի հասնում անգամ 20 տոկոսի:

- Ցավոք, երկիրը դեռեւս միջին աշխատավարձի կենսաթոշակի համապատասխանեցման քաղաքականությունների ցուցանիշին հասնելու հնարավորություն չունի, թեպետ ազգային տարադրամի կայունությունը, աշխատատեղերի ավելացումը որոշակի հնարավորություն են ստեղծում առաջիկա տասնամյակում հասնել նման համապատասխանության,- հայտարարեց Սոսո Արջվաձեն:

Վիճակագրի հավաստմամբ՝ կառավարությունը հաշվի է առնում նաեւ այն հանգամանքը, որ արժեզրկման

պայմաններում ավելացնի միջին կենսաթոշակի գնողունակությունը, ինչը մեծապես պայմանավորում է կենսաթոշակառուների բարեկեցությունը:

- Կենսաթոշակներն ավելանում են, եւ դա առանձնակի նկատելի է բարձրալեռ շրջաններում բնակվողների եւ 70-ն անց կենսաթոշակառուների համար: Այդ ավելացումը նկատելի է նաեւ առանձին արտոնություններից օգտվարության համար գլխավոր մարտահրավերը շարունակվում է մնալ կենսաթոշակի գումարի համապատասխանեցումը միջին աշխատավարձին, թեւ կառավարությունը շարունակվում է ուշադրության կենտրոնում պահել տարեց քաղաքացիների շահերը: Հավանաբար, հենց դրանով է պայմանավորված կենսաթոշակի ամենամյա ավելացման եւ համախառն ներքին արտադրանքի ծավալի հետ կենսաթոշակի մեծության անմիջական առնչությունը: Կենսաթոշակառուն կենսաթոշակը ստանում է լարիով եւ նրան չի հետաքրքրում կենսաթոշակի դոլարային համարժեքը: Նրան շատ ավելի անհանգստացնում է արժեզրկումը, գնաճը, ինչը անմիջականորեն ազդեցություն է գործում մարդկանց կենսամակարդակի վրա,- ընդգծեց վիճակագիրը:

ԱՐՄԱՆ ԵՂՈՅԱՆ. «ՎՐԱՑ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՂՈՐԴԱԿԻ ԼԻՒՐԱՎ ԱՆԴԱՄԸ ՎԵՋԱԺՈՂՈՎԸ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՂՈՐԴԱԿՅՄԱՆ ՀԻՍՆԱԼԻ ՀԱՐԹԱԿ Է

Ինչպես արդեն հաղորդել ենք, թերիլիսին անցկացվեց Ֆրանկոֆոնիայի խորհրդարանական վեհաժողովի 48-րդ նիստը: Նիստի աշխատանքին, կազմակերպության 91 անդամ երկրների և ասոցացված ու դիտորդական կարգավիճակ ունեցող երկրների ներկայացուցիչների հետ միասին, մասնակցեցին Վրաստանի և Հայաստանի խորհրդարանի պատվիրակությունները:

Հայաստանի պատվիրակության ղեկավար, Հայաստանի Ազգային ժողովի Եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Արման Եղոյանը՝ «Վրաստանի» հետ հարցազրույցում ընդգծեց, որ Ֆրանկոֆոնիայի խորհրդարանական վեհաժողովը հիանալի հարթակ է խորհրդարանականների հաղորդակցման համար:

- Հայաստանի համար արտակարգ նշանակալի է վեհաժողովի անդամ երկրների հետ հաղորդակցությունը, մշակութային, քաղաքական կապերի ամրապնդումը: Մասնավորապես, իմ վրաց գործընկեր Դավիթ Սոնդուլաշվիլու հետ եւ ծանոթացա վեհաժողովի նախորդ նստաշրջանում եւ մեր միջեւ հաստատվեցին բարեկամական հարաբերություններ: Նման բարեկամական հարաբերություններ ունեն նաեւ Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Մակա Բոճորիշվիլու հետ: Այն, որ վեհաժողովի հերթական նստաշրջանն անցկացվեց դեռեւս կազմակերպության ոչ լիարժեք անդամի, ասոցացված անդամ երկրի մայրաքաղաքում, արդեն իսկ կարելի է համարել վրաց դիվանա-



Չախից՝ Վ.Բաբոյրյանը, Ա.Եղոյանը եւ Դ.Սոնդուլաշվիլին Ֆրանկոֆոնիայի վեհաժողովին

գիտության հաղթանակը: Եվ այն, որ այս նստաշրջանում Վրաստանը դարձավ Ֆրանկոֆոնիայի խորհրդարանական վեհաժողովի լիարժեք անդամը, ողջունելի փաստ է: Օգտվելով առիթից, ցանկանում են շնորհավորել իմ վրաց գործընկերներին դիվանագիտական նման հաջողության համար,- «Վրաստանի» հետ հարցազրույցում ասաց Արման Եղոյանը:

ՄԻՐԱՆՂԱ ՕԳԱՆԵԶՈՎԱ